

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**Հ Ո Ւ Ր Ր Ի Ն Ե Ր**

Հուրրիների մասին առաջին անգամ յիշատակուել է հաթևան արձա- նագրութիւնների մէջ Մուրսիլ կամ Մուրշիլ Ա-ի օրով (1790-1760) :

Պատմարան Աղոնցը իր յայտնի գրքում՝ (Histoire d'Armenie, Les ori- gines, 1946), գրում է, թէ երկրորդ հազարամեակի սկիզբը նշանաւորում է էթնիկական նոր տարրերի հեղեմոնիայով, որոնցից Հուրրիները (կամ՝ Հու- րիթիները) ասպարէզ են դալիս վերին Միջագետքում կամ Մուրարտիում (էջ 21) : Գիտական ճորճ Պարթըն այն կարծիքն է յայտնել, թէ Հուրրիները եկել են կենտրոնական Ասիայից, Իրանեան բարձրաւանդակի ճանապարհով ու Չաղրոշ լեռների վրայից : Նրանք թափառական ու աւաղակարարոյ ցեղեր են եղել, որոնք ապրել են մերթ յափշտակութիւններով, մերթ ստրկական աշխա- տանքներ կատարելով եւ մերթ վարձկան զինուորութեան ծառայութիւննե- րով : Նրանք միանգամից չեն խուժել, այլ նախ խմբերով աղքատ ու սնանկ ե- կել են Միջագետք, ապա՝ հեռո՛հեռէ բազմանալով ու ծաւալուելով մեծ հոր- դաներ են կազմել եւ մեծ թափով խուժել են : Վերջին եկողները իրենց հետ յերել են ձին, որ հաւանարար գործածում էին նրանց առաջնորդող հնդկերո- պական խաւին պատկանող ցեղերը (եղ. Քասունի) :

Յօսելով Հուրրիների մասին, գիտնական Գէօթցէն (Gotze) եղիպոսոս յարձակած Հիւբսոսներին համարում է Հուրրի կամ Սարրի ծագումով ցեղեր : Հիւբսոսների արչաւանքը եղիպոսոս եւ Հուրրիների յարձակումները Սիրիայի վրայ կապակից շարժումներ են դիւուում եւ նոյնիսկ միեւնոյն շարժման յա- ջորդական ալիքները :

Այս ժամանակ Հուրրիները հասնում են հզօր ու ծաւալուն պետակա- նութեան եւ իրենց տիրապետութեանն են ենթարկում ոչ միայն հիւսիսային Սիրիան, այլեւ արեւելեան Կապադովկիան : Նկատի ունենալով այս պարագա- ները հաւանական են համարել, որ Հուրրիական զօրութիւնը պատճառ եղած կարող է լինել Սատտինների (Հաթիերի) աստղի նսեմացման, նրանց մեկուսացը- նելով ու հեռու պահելով Սիրիայի ու Միջագետքի առեւտրական բանուկ ու շահարեր պողոտաներից<sup>1</sup> :

Հուրրիների այս մեծ պետութիւնը, որ տեսել է մինչեւ 1500 (մ. թ. ա.), Ասորեստանցիները Սանիզալրատ են կոչել, իսկ եղիպոտացիները իրենց աւելի հին արձանագրութիւններում Նահարիմա կամ Նահարիմա են անուանել այն աէրութիւնը, որ իշխել է հիւսիսային Սիրիայի ու արեւմտեան Միջա- գետքի վրայ (Snu՝ Սաշատրեան, «Հայաստանի Սեպ. Շրջ. Պատմութիւն») :<sup>2</sup>

<sup>1</sup> Ինչպէս ձիու առաջին անգամ երեսան գալու հարցը, այնպէս եւ Հի- րիթների աստղի նսեմացման պատճառը ունեմ Հիւբսոսների հետ եւ կապում, ուրիշներ՝ Հուրրիների հետ, ու այլ գիտնականներ՝ Միտանիների հետ :

<sup>2</sup> Եղիա Քասունի, «Նախասայկական Հայաստան» :

Հետևաբար, եզրակացնում է Քասունին, այն զորութիւնը, որի դէմ Եգիպտացիները մաքառել են 16-րդ դարում (մ. թ. ա.), Սիրիայի տիրապետութեան համար բուն Միտանին չէր, այլ նրա նախորդը՝ Հուրրիական պետութիւնը: Բայց Թողմես Բ-ի օրոյ (1929-1901) Եգիպտացիները կարող էին Սիրիան իրենց ստացուածքը համարել: Եգիպտացիների հետ այս հարիւրամեայ պատերազմն էր, որ հաւանաբար թուլացրեց Հուրրիական զորութիւնը Միջագետքում ու ճանապարհ բաց արեց Միտանիների յաղթանակին ու ծաւալմանը:

Միտանիները, որ Հնդեւրոպական ծագում ունէին, իրբեւ սկզբնական տիրապետութեան սահմաններ ունեցել են Տիգրիսի վերին երկու բազուկների աւազանը, Կորդուաց ու Աղձնեաց աշխարհները, այնտեղից յարձակուելով հետզհետէ գրաւել են Միջագետքի այլևայլ մասերը ու տարածուել մինչև Քերքուկ (Հին Արարիա)<sup>3</sup>:

Միտանիների ներարշաւից յետոյ, երբ նուաճում է Հուրրիական պետութիւնը, Հուրրիները մտնում են Միտանիների վարչական կազմի մէջ եւ դառնում գերակշիռ դիրքեր զբաւած տարրեր: Որովհետեւ Միտանիները յաղթահարելով Հուրրիներին չեն կարողացել այնուամենայնիւ անտեսել ու արհամարհել նրանց, այլ հարկադրուած են եղել համաձայնութեան դա: նրանց ազնուականութեան հետ եւ ընդունել նրանց իրենց դաշնակցութեան մէջ: Որովհետեւ Միտանիների դայուց առաջ Հուրրիները ունեցել են ազնուապետական եղանակով կառավարող դաշնակցային պետութիւն (Քասունի):

Քասունին սակայն որոշ հակասութեան մէջ է ընկնում Հուրրիների առիթով, երբ աշխատում է ուղղել Հրոզնուն: Չիս գիտնականը «Սուրբի երկրներ» ասելով Սուրբիներին տեղագրական նշանակութիւն է տուել, մինչդեռ իր կարծիքով ցեղագրական նշանակութիւն է ունեցել: Քասունին պնդում է, որ «Հուրրի» եւ «Միտանի» աշխարհագրականօրէն համագոր դադարներ չեն: Ոչ Միտանիի ամբողջութիւնը Հուրրիական էր եւ ոչ էլ Հուրրիների ամբողջութիւնը Միտանիական երկրների մէջ էր սահմանափակուած: Ընդհակառակը, ասում է նա, Միտանի պետութեան սահմաններից դուրս հաստատուած Հուրրիների ենք հանդիպում իրարից անջատ եւ շատ հեռաւոր տարածութիւնների վրայ: Օրինակ Հին Կտակարանի Քոռեցիք նոյնն են Հուրրիների հետ, որոնք հաստատուել են Պաղեստինի հարաւային ծայրերում, ինչպէս Հիւսիսային Սիրիայի ծովեզերքի վրայ: Եղել են նաեւ «Հեռաւոր Հուրրիներ», որոնք բրնակուելիս են եղել Ուրմիայի լճի մօտերը եւ կամ Փոքր Ասիայի արեւելեան մասերում, վերին Եփրատի կողմերը եւ Պոնտոսի սահմանների մօտ (Քասունի, «Նախահայկական Հայաստան»):

Քասունին այստեղ պատմական սկզբունքային հարցը շփոթում է երկրորդական նշանակութիւն ունեցող հարցի հետ: Եթէ Հուրրիները երկրորդ հարամեակում արշաւելով Միջագետքի վրայ հիմնեցին իրենց հայրենիքն ու կենտրոնական իշխանութիւնը, ապա՝ նոյն ձեւով՝ Միտանիներն էլ իրենց հերթին, աւելի ուշ, արշաւեցին Հուրրիների վրայ՝ նուաճեցին նրանց իշխանութիւնն ու երկիրը ու հիմնեցին իրենց թագաւորութիւնը: Սուրբիին տեղի տը-

<sup>3</sup> Եգիպ Քասունի, Յոյն տեղում:

ւեց Հուրրիններին, Հուրրինները՝ Խարրի-Միտանիններին եւ այս վերջիններս՝ հզօրացող Ասորեստանցիներին: «Հեռուոր Հուրրիններ» գոյութիւնը չի կարող արդարացնել հեղինակի առաջ քաշած տեսութիւնը ցեղերի այնպիսի տարածական պայմաններում, որպիսիք կային այդ ժամանակաշրջաններում: Եւ պատահական չէ, որ Քասունին ամփոփելով այդ ժամանակաշրջանի պատմական էթնիկական երևոյթները, հետեւեալ խմբաւորումն է անում.

ա. Սուրարիներ, շատ հին ժամանակներից Միջագետքի բնակիչներ կազմած՝ ներկայացնում են երկրի բնիկների բուն զանգուածը:

բ. Հուրրիներ, Երկրորդ հազարամեակի սկիզբը մերձաւոր արեւելքից արշաւած ցեղեր, որ հպատակեցնում են Սուրարու երկիրը եւ նրա բնակչութիւնը եւ ստեղծում ազնուապետական եզանակով կառավարուող դաշնակցային մի պետութիւն:

գ. Միտանիներ, Հնդեւրոպական ցեղեր, որ գէնքով յաղթում են Միջագետքի Հուրրիններին, որոնք տկարացել էին զանազան պատճառներով, ապա՝ հաշտութիւն կնքելով նրանց հետ տեղ են տալիս նրանց իրենց պետական ու վարչական կազմում:

Տեսնում ենք, որ պատմա-էթնիկական իրադարձութիւնների կենտրոնը Միջագետքն է Սուրարիներից սկսած: Աշխարհագրական (տեղագրական - Գ. Հ.) անուանակոչութիւնը հերթաբար փոխում է ըստ նոր ցեղերի անուանակոչութիւնների: Բայց ցեղագրական անունների փոփոխութեամբ տեղագրական իմաստի փոփոխութիւն տեղի չի ունենում, եւ ինչ-որ հասկանում ենք վաղ ժամանակների համար Սուրարի կամ Սուրարտու ասելով, նոյնը աւելի յետոյ՝ ըմբռնում ենք Միտանիական պետութեան սահմանների մէջ:

Հակառակ դիտնականների մէջ տեղի ունեցած տարակարծութիւններին ցեղերի անունների շուրջ, այսուհանդերձ, անհերքելի փաստ է, որ Երկրորդ հազարամեակը էթնիկական նոր կազմաւորումների մի ժամանակաշրջան է: Ահա թէ ինչու տարբեր վերաբերմունքի են արժանացել վերոյիշեալ ժողովուրդներն ու ցեղերը տարբեր պատմագէտների կողմից:

Ա. - Գիտնականներից Օլպրայթ, Սփայլըր հին Հաթեան արձանագրութիւնների յիշողութիւնները չեն ճանաչում «Սուրարի» անուամբ ժողովրդի գոյութեան առթիւ: Նոյնպէս Պրոֆ. Աճառեանը չի յիշատակում Սուրարիներին: Նա գրում է. «2500 թուականից առաջ Բարեւաստանի Կիշ քաղաքից մի սեմական գաղութ դալիս է հաստատուում Տիգրիսի միջին հոսանքի վրայ, Միտանի ժողովրդի շրջանում: Այդ Կիշ ցեղի կուլտուրական ազդեցութեամբ եւ Բարեւոնի հետ մշտական յարաբերութեամբ նոյն տեղի Միտանիները սեմականանում են, ընդունում են բարեւացուած լեզուն եւ երկու ժողովուրդների ձուլումից առաջանում է Ասորեստանի ժողովուրդը» (Հր. Աճառեան, «Հայոց լեզուի պատմութիւն», Ա. 4.):

Բ. - Պրոֆ. Ա. Պաշտրեան, Հ. Տաշեան, նոյնացնում են Սուրարիներին եւ Հուրրիններին:

Գ. - Բարեւոնացիք «Հուրրի» անունը չեն ճանաչում, որ Հաթերի կողմից յիշատակուած մի անուն է:

Դ. - Հայ բանասէրներից Սաֆրադեանն էլ է ենթադրում, որ «Հուրրի» կամ «Հարրի» անունը Սուրարի անուան ձայնափոխութիւնից առաջացած մի ձեւ է:

Ե. — Իսկ Հ. Տաշեանն էլ առարկում է Սաֆրաղեանին, թէ նման ճայ-  
նափոխութեան համար լեզուարանական հիմք չկայ:

Սուրբրինների անկումից յետոյ Սուրբարտու երկրի վրայ եկած հետա-  
դայ ցեղերի պատմութիւնը յաճախ միախառնում է, եւ մենք տեսնում ենք,  
որ ոմանց կողմից Հուրրիների մասին մեր ստացած ծանօթութիւնները ուրիշ-  
ների կողմից վերագրում են Սարրի-Միտանիներին: Եւ քիչ առաջուայ «Սո-  
րարի-Հուրրի» միացումը կրկնում է այս անգամ «Հուրրի-Միտանի» նոյնա-  
ցումով:

**ԳԷՈՐԳ ԶՍԻՏԵԱՆ**

(Շար. 1)

**4 Եղիա Քասունի, նոյն տեղում:**

